


“Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ


 Adresse
 Rédaction du “Droschak”
 LIBR. BURO
 GENEVE (Suisse)

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ



Ե Գ Ի Պ Տ Ա Ց Ի

(ԱՐՏԱՇԷՍ Մ. ԴԵԻԵԱՆ)

1868 — 1897

Ա Ր Տ Ա Շ Է Ս Մ Գ Ե Ի Ե Ա

ԵՐԵՎԱՆԻ, ՅՈՂՎՈՒՄ, ՀԱՅԿ, ՄՈՌՍՏԱՓԱ

(1868—1897)

— 0 —

Միջին, թիկնեղ եւ կորովի հասակ մը լայն ուսերու վը-
րայ գեղեցիկ զրուխ մը առատ մազերով դարդարուն. խը-
րովատ դէմք մը, որուն ժպիտն ու ծիծաղը անչափ յանկու-
ցիչ, որուն պայրոյթի ու կատարութեան արտայայտութիւ-
նը անարկու. խոշոր, գեղեցիկ, բոցավառ աչքեր՝ իրենց
խորութեան մէջ խոնուն ինսցականութիւն մը թաքցնող. —
անա՛ արտաքինը այն անմուտաց ընկերոջ, որ անջնջելի ա-
նուն մը կը թողու հայ յեղափոխական տարեգրութեան մէջ:

Հրացանը ձեռքը չմտնաւ Եգիպտացին կուրի դաշտին վը-
րայ. բախտը չկասկեց իր անունը հերոսական գէպքի մը
հետ. բայց իր կեանքը արդէն ամբողջ հերոսութեան մը եւ-
ղաւ, իր յեղափոխական 7 տարեան կեանքին ամէն մէկ
ժամը, բառի բուն առումով, ծիրեցաւ, մաշեցաւ իր պաշ-
տած գործին համար:

Շատ անձուկ են այս էջերը այդ անօրինակ գործունէու-
թիւնը նկարագրելու համար. Պօլսի Դաշնակցական կադ-
մակերպութեան ամբողջական պատմութիւնն ընել հարկ
պիտի ըլլար, այնքան սերտ հիւսուած է Եգիպտացիի կեան-
քը այդ ամբողջին հետ:

Ժողովուրդի աստապագին ընդերքէն ելած՝ անոր ցաւե-
րուն ո՛չ ակամատես, այլ մասնակից, մարդկային արժա-
նապատուութեան ծայրագոյն սատիճան դարգացած դգա-
ցումով մը օժտուած՝ ամէնէն կատարի թշնամիներէն մէկն
եղաւ ինքը թիւրք բռնակալութեան:

Իր քաղքէք «հիւածին» մակրելը տուած էին իր ընտա-
նիքին. Արտաշէսը չզաւեց այդ անունին. իր գործունէու-
թեան եօթը տարիները — առասպելներու սիրելի թիւ մը —
բարի դեւերու երեսը ձերտակ հանեցին: Արտաշէսը վրէժի
մարմնացեալ դեւ մը եղաւ իր ազգին թշնամիներուն, դեւի
մը ճարակութիւնն ու յանդգնութիւնը ունեցաւ, բարի դեւ
մը հանդիսացաւ իր ընկերներուն համար:

Յեղափոխական գործին համբալ մը չէր Արտաշէսը, երբ
92-ին վերջնապէս կը հաստատուէր Պօլսի. երկու տարի շա-
բունակ գործած էր իր ծննդավայրին խումբերուն մէջ եւ
փորձառութեան պաշարով մը կուգար սուլթաններու մայ-
րաքաղաքը Դաշնակցութեան տեղական կազմակերպու-
թեան տուջին քարերը գնելու:

Եթէ «անկարելին» շատերու համար պատրուակ մըն է
նայնաձեռնող ոգիի պակասը վարագուրելու, Եգիպտացիին
համար յամառ, անվատ կուրի նշանարանն եղաւ: Այդ բա-
ռը չլուսեցաւ իր բերնէն: Իր գործնական խելքը, իր սուր
դիտողութիւնը միշտ կրնար ելքի ճամբայ մը գտնալ առաջադ-
րածին համակու համար: Իրեն յանձնուած գործ մը կիսովին
արդէն կատարուած կարելի էր համարել: Ընկերներու հա-
մադումն էր այդ եւ չսխալեցան երբեք: Անասան կամք մը,
անխղճով պաղարկուածութիւն մը, կշռող քաջութիւն մը ա-
մէնէն վտանգաւոր ձեռնարկներու եւ պարագաներու մէ-
ջէն անվեառ հանեց զինքը:

Կազմակերպութեան առաջին օրերուն երբ դեռ գործի
բաժանում անհնար էր ուժերու սակաւութեան պատ-
ճառով, Եգիպտացին ամէն բան եղաւ:

Բարոյիչ պէտք էր եւ Եգիպտացին եղաւ, հող ալ գնե-
լով իր նկարագրին բաժինը: Տեսակ մը հոտառութիւն
ունէր գտնելու անոնք, որոնցմէ գործի մարդիկ կրնար պատ-
րաստել: Ուսեալներու հետ գործ չունէր, անոնք չէին կըր-
նար զինքը հասկնալ, ինքն ալ անոնց պէտք չունէր ին-
քը հաւատքով մտած էր այդ գործին մէջ՝ հաւատքի մար-
դիկ կը փնտռէր: Յանդգնօրէն նետուած էր այդ ճամբան եւ
կը պահանջէր որ նոյնն ընէին եւ իր հաւատակիցները: Սօ-
սելու ձիրքէն զուրկ չէր. իր ուղեւորութեան վայրկեաննե-
րուն մէջ — գործի մը կատարումէն անմիջապէս առաջ —
Եգիպտացին իր սեփական քառերն ու դարձած ընկերն ունէր
ընկերներուն հոգին կրակ ձգելու: Բայց երկու վիճաբա-
նութիւններ «չանւ. քարոյով» էին իրեն համար:

92-էն 97 ղէնքերու մեծագոյն մասը ինքը գնեց կամ
փախուց լրտեսներու թիւն տակէն. փոխադրեց, թաքը-
տոցներ գտաւ: 95 Սեպ 18-ի շարժուն, երբ Դաշնակցու-
թիւնն իր բոլոր արամագրելի ղէնքերը ցրելէ ետք, հարկ
գատեց նորերն ունենալ, Եգիպտացին էր որ այդ տաղա-
պալի վայրկեաններուն գնեց զինավաճառներէն ռէվոլ-
վէրներ, լրտեսներու աչքին առջեւ, եւ փոխադրեց Երրոր-
դութեան կեղեցիկ, արդէն պաշարուած ոստիկաններով
Օգոստոս 14-էն հոտք — աւելի մեծ խառութիւններու ա-
տեն — մատուկներով սուրբեր փոխադրեց մէկ տեղէն միւ-
սը, դարձեալ նոյն յաջողութեամբ:

Տէրրորական գործերու պատրաստումի եւ վարումի հա-
մար իրմէն աւելի ճարպիկը դժուար էր գտնել: Անգամ մը
իր հետախուզումներն սկսեցին ետք ալ զո՞ր իր ճանկերուն
մէջն էր: Դադանի ոստիկանի մը նման կրնար հաշիւ տալ
իր զո՞րն անցուցած կեանքի ամէն մէկ վայրկեանի մասին.
գիտէր արդէն անոր սովորոյթները, անցած փողոցը
ժամը: Ահաբեկիչները իր առաջնորդութեան տակ վտան
էին յաջողելու. կ'անէր ատոնք, կ'իջնար իր զո՞րն ետեւէն,
կը սորվեցնէր «կարգը կատարելու» եղանակը, փախուստի
ճամբաները, թաքստոցները, եւ երբ ապահով էր թէ «գա-
սերնին աղէկ գիտեն», ինքը կուտար նշանը. . . . Վարանու-
մը վայրկեան մը միայն ահաբեկիչին հոգին խռովէր թե-
րեւ. Եգիպտացիին հմայիչ, բայց խիստ նայածքը անոր
ձեռքին տէրն էր այդ միջոցին. . . . Եգիպտացին հո՞ն էր
մինչեւ զո՞ն իյնար, մինչեւ տղաքը փախչէին. քառորդ մը
կտրեց դարձեալ հոն էր, զո՞րն մանր հաստատելու հետա-
քըքի անցորդի մը շշմած դիմակին տակ:

Եթէ գործադրութեան տրուած վճիռներու անվրէպ աջո-
ղանքին մէջ կը տեսնուի իր հրաշալի պաղարկուածութիւնը,
այլ եւ այլ պատճառներով յետաձգւած գործերու ուսումնա-
սիրութիւնը իվեր կը հանէ իր մտքին դարմանալի կորովը
կը բաւէ յիշել Մարգարայանը ուսմբով սատկեցնելու գոր-
ծը, որ Եգիպտացին ինքն առաջարկեց անձամբ գլուխ բե-
րել 96-ի ռամազան 15-ին Յատակագիծը եւ պատրաս-
տութիւնները տեսնուած էին, երբ Կեդ. Կոմիտէն հարկ դա-
տեց վճիռը փոխել: Եկաւ ռամազանի այդ օրը եւ հրէջք ան-
ցաւ ճիշդ այն կէտերէն ուր պիտի պայթէին իր գլխուն Ե-
գիպտացիին ռուսները. . . .

Իր քովը՝ ձեռքակալելու վախ չկար. ոստիկանութիւնը
երբեք չկրցաւ ո՞ր եւ է ընկեր մը անոր ձեռքէն ճանկել առ-
նել: Պահպան հրեշտակ մըն էր որ կ'առաջնորդէր վտան-
գած ընկերոջը դէպի թաքստոցը — ուր ամիսներով կրնար
մնալ — կամ իր ձեռքով Պօլսէն դուրս կը հանէր: Մովը
նոյնքան ընտանի էր իրեն, որքան ցամաքին փողոցները:
Պօլսի մտնող կամ անկէ փախչող ընկերներուն մեծ մասը
դեռ երկար ատեն անհուն խանդաղատանքով պիտի յիշեն
Եգիպտացին, որ ցուրտին ու բուրբին մէջ՝ շարագուշակ հա-
ղը բերնին, իր մնաք բարովը չէր բսեր մինչեւ ապահով
ձեռքերու չյանձնէր զիրենք:

Չորտուկէ տարի ամբողջ գործեց Պօլսի մէջ, գտնեցաւ
ամէնէն վտանգաւոր ձեռնարկներուն մէջ, փնտաւեցաւ իր
կեղծ անուններով, բայց ո՛չ ոստիկանները եւ ո՛չ ալ լրտես-
ները խորհեցան պահ մը կասկած ունենալ այդ մարդուն վը-
րայ, որ գրեթէ շարունակ իրենց աչքին առջեւն էր: Զինա-
վաճառները անօրացի Մուստաֆա կը ճանչնային զինքը:
տանախիտով հարկը ղէվզէկ հայ կաթոլիկ մըն էր, ուրիշնե-
րուն համար դարմանցի յոյն մը, Լրտեսներէն, ոստիկաններէն
ոմանք իր ֆէսին ու հագուստին, քալացքին ու նայացքին
նայելով՝ զիրենք հսկելու պաշտօն ունեցող բարձրագոյն
լրտեսի մը տեղը գրած էին զինքը: Աւելի անձանօթներ՝ մալ-
թացի սրիկայ մը կամ քէֆալօմիացի աւազակ յոյներէն կը
համարէին եւ կը զուշառային մօտենալ:

Երեք անգամ ոստիկանութեան ճանկն ընկաւ պատահա-
կան կերպով. երկու անգամին օձիքն ազատեց դարմանալի
ճարպիկութեամբ, երրորդին՝ երկրէն դուրս հանեցաւ իբր
օտարական, այնքան վարպետութեամբ խաղաց այդ դերը:
Իր բոլոր այդ մեծ յատկութիւններուն հետ՝ համեստ ալ
էր. հազազղիւտ արժանիք մը իր դիրքն ունեցող մէկու մը
համար: Ընկերները կը սիրէին ու կը յարգէին զինքը, Կեդ.
Կոմիտէն հոգի կուտար անոր վրան, գաղտնիք մը չունէր

անկէ, բայց Եգիպտացին նոյն մարդը մնաց ինչ որ էր՝ գործի մարդը: Յաւակնութիւններ չունեցաւ, չպարծենցաւ իր բարձրերով, գիտցաւ իր տեղը եւ ջանաց իւրաքանչիւրին իր տեղը ձանչցնել:

Յեղափոխական դպրոցի մը հայրն եղաւ ինքը. Պօլսի դաշնակցականներու մեծ մասը անոր աշակերտն եղան եւ ամէնէն փայլունը անոնց մէջ սիրելի դէմք մը Բարեկէն Սիւնինս Բայց այդ անդադրում կեանքը, ձիւնի, անձրեւի ու ցուրտի ատեն Պօլսի մէկ ծայրէն միւսը վազելը, ասոր հետ միացնելով իր ծայրայեղ խնայողութիւնը, որով կը վերաբերէր հանրային դրամին իր առողջութիւնը քայքայեցին: Եգիպտացին թոքախտէ բռնուեցաւ: Երբէք, սակայն, սրտունջի ձայն մը չլսուեցաւ իր բերնէն. հազալով, անքալով, արիւն թքնելով իր գործին գլուխն էր դարձնալ: Ընկերները հազիւ կարողացան ԾԿ-ի ձմեռը բռնի Եգիպտոս խրկել զինքը, քիչ մը կազդուութիւն համար գէթ: Քանի մը ամիսէն նորէն երեցաւ Պօլս. գործ կ'ուղէր, իր բերնով գործ չընեն էր որ պիտի մեռնէր զինքը. — «Գերեզմանիս մէջ հանգստանալու շատ ժամանակ պիտի ունենամ», կը պատասխանէր իրեն եղած յորդորներուն: ԾԿ-ին ամառը իր ծննդավայրը խրկեցին զինքը գործի պատրաստի տակ բայց իրապէս հանգիստ տալու համար: Յանկարծ ակամա՛ր կը հասնի օգոս. 14 ի պատրաստութիւններու շուկայ վայրկեան մը չի կորսնցնէր, առանց անցազրի կը վազէ Պօլս, Պանքի գրաւումէն 2 ժամ առաջ կը հասնի հոն եւ կը դանձէ իր ընկերները:

Ականատեսի մը պատմելով «կարծես Բրիտոս ինքն էր եկած իր աշակերտները յորդորելու»: Իր ուրախութիւնը անսահման էր, ուսմբերը կը համբուրէր, վերջապէս մօտ էր իր ուխտին կատարումը. . . . Բայց բախտը ա՛լ երեսը դարձուցած էր անկէ՝ Եգիպտացին չուզեց միտակ թողնել 20 քիլոնոց ուսմբերը փոխադրող իր մէկ ընկերը, ընկերացաւ անոր, բայց մինչև հասան, պանքի դռներն ալ գոցւած էին եւ ուսմբերը կը տեղային . . .

Կատարութեան ամբողջ օրը լացաւ խեղճը. . . .

Օգոս. 14 էն ետք՝ վերջին վեց ամիսը հազալագիւտ անձնակազմով, ընկերակազմով եւ ինքնամոռացութեան օրինակը տուաւ: Նախկին եռանդով աշխատեցաւ այդ շատ դժուար օրերուն մէջ, բայց առաջւան ուժը ալ չկար. . . . ծնկները կըրտ, հիւժւած, իր վերջին ձիգերն էին ատոնք. . . . Բայց այդ ազնիւ հոգին օր մը չբացաւ բերանը հանգիստ խնդրելու: Պարտքի դաշտին վրայ որոշել էր մնալ մինչև իր վերջին շունչը. . . .

Վերջին անգամ ընկերները դարձեալ Եգիպտոս խրկեցին զինքը. իր վիճակը հետզհետէ վատթարացաւ. զգաց Եգիպտացին որ ա՛լ անկարող էր որ եւ է օգուտ տալու, չուզեց ալ բռն մը ըլլալ ընկերներուն. . . . եւ յիշեց իր մայրը, բայց աւա՛ղ ալ ուշ էր. . . .

Յունիս 1-ին բուրգերու դարեւոր հովանիին տակ հանգչեցաւ այդ վեհ ոգին, իր ամէնէն աւելի ատած մահովը հիւանդութեան անկողնին մէջ:

Յեղափոխութիւնը պիտի պանէ իր այդ հարազատ զուկին՝ փառաւոր տեղ մը իր պատմութեան էջերուն մէջ, իսկ իր ընկերները պիտի ունենան միշտ աղի արցունքի շիթեր անզուգական ընկերով մը անփառունակ մահը ողբալու. . . .

Կուսակցութիւն

ՎԵՐՉ ԱՅՍ ԴՐՈՒԹԵԱՆ

Հայ ժողովրդի տղուկ անդամները, որոնք իրենց այնքան լաւ են զգում այս ընդհանուր աղէտի մէջ, խոհեմութեան ու չափաւորութեան ասպետները, որոնք «կամաց կամաց», «առանց արիւն թափելու» կամենում են երջանկացնել մեր ժողովուրդը, միացած մի շարք աւելի անկեղծ, բայց միամիտ մարդկանց հետ, որոնք շը-

ւարած կանգնել են պատմական ներկայ ըրպէի վիթխարութեան առջև եւ չեն կարողանում նրա նշանակութիւնն ըմբռնել, պահանջում են մեզանից զսպել հայ յեղափոխութիւնը, սանձահարել մի ինչ որ հրաշքով մեր ժողովրդի տարրային ու ուժգին շարժումը:

Յանուն սիրոյ դէպի հայ ժողովուրդը, յանուն այդ ժողովրդի բարեկեցութեան եւ ապագայի պահանջում են մեզանից չխախտել ներկայ statu quo-ն եւ թողնել, որ փրկարար ժամանակը բուժի մեր ժողովրդի լայն բացւած վէրքերը:

Statu quo . . . զաղբել, ատել խօսք:

Մի երկիր, ուր դադարել է արդիւնաբերական ամէն մի կեանք, ուր վայրենացած ու խոպան ընկած են լայնատարած, տարիներից ի վեր ոսկի հասկերի կարօտ արտերը, ուր արհեստաւորի ժրաջան ու ճարպիկ ձեռք վաղուց արդէն չի կուռ ու կոփում, կարում ու հիւսում, մի երկիր՝ հարկւրաւոր ծխող դիւղ ու քաղաքներով եւ մի ժողովուրդ՝ քաղցի ու անլուր կամայականութեան ձիրանների տակ կորացած — ահա հայկական statu quo-ն . . . եւ յանուն սիրոյ դէպի հայ ժողովուրդը պահանջում են մեզանից, որ մենք չխախտենք այդ դուրսութիւնը. . . .

Որպիսի ծաղը:

Թող statu quo-ի համար փաստաբանեն նրանք, որոնց կոչումն է պղտոր ջրի մէջ ձուկ որսալը. թող ներկայ դուրսութիւնը պահպանելու ձիգ թափեն հայ ժողովրդի կատաղի թշնամիները՝ կուշտ ու շահամոլ վարդապետը, կապալառուն եւ սեղանաւորը. թող ներկայ դուրսութեան համար դողայ պաշտօնեաների եւ ուրիշ օտարակերների արիւնարբու վոհմակը. ճահճի եւ բորբոսնած մթնոլորտի մէջ միայն կարող են դրանք բարգաւաճել եւ իրենց բախտաւոր ու հանգիստ զգալը ժողովրդի համար, որն այժմ՝ ո՛չ ուժ եւ ո՛չ էլ ցանկութիւն ունի այդ լիբը օտարակերներին կերակրելու եւ դիրացնելու, — ինչպէս նա այդ անում էր երկար տարիների ընթացքում, — որի կրճքում, չնայած ծայրայեղ աղքատութեան, անվերջ տառապանքներին եւ հայածանցներին, դեռ չեն մարել հասարակական ուրիշ կեանքի, քաղաքական լաւ կազմակերպութեան կայծերը, յեղափոխականացած հայ ժողովրդի համար անտանելի է ներկայ դուրսութիւնը:

Մեր անվեհճեր ասպետները, ինչպէս յայտնի է, սաստիկ վախենում են կոտորածներից եւ այժմ՝ շատ դժն են, որ երկրում «խաղաղութիւն» է տիրում. ժողովրդի բարձրաձայն հեկեկանքը եւ օգնութեան ճիչը էլ չեն անհանգստացնում եւ վրդովում նրանց անդորր կեանքը: Նրանց ինչ հոգն է, որ թիւրք կառավարութիւնը խլել է մեզանից մի ժողովրդի գոյութեան համար ամենակարեւոր պայմանները. նրանց ինչ հոգն է, որ առանց սրի ու դազանակի, առանց կախաղանների ճռճոցի եւ բանտերի խոնաւութեան էլ, սարսափեցուցիչ արագու-

Թեամբ նօսրանում են հայ ժողովրդի շարքերը, որ սեփական հայրենիքում աշխատելու իրաւունքից զուրկ գաղթում է հայ տղամարդը, այրիանում է հայ կինը, մերկ ու անօթի մեռնում են տասնեակ հազար մանուկներ. նրանց ինչ հոգն է, որ Թրքական բռնակալութիւնը և օտարակերների անամօթ տնտեսութիւնը սպառնում են այլասեռելու մեր ժողովուրդը Թէ ֆիզիքապէս և Թէ բարոյապէս՝ բանտերի, կախաղանների և սրի ճարակ դարձնելով նրա ամենաընտիր զաւակներին, նետելով նրան անձայր աղքատութեան և հիւանդութիւնների գիրկը: Այդ բոլորը ինչ նրանց հոգն է, միայն չը խախտւի անիծեալ խաղաղութիւնը. . . .

Թող մեր ասպետները յանուն սիրոյ դէպի սեփական կաշին, յանուն իրենց և իրենց նմանների բարեկեցութեան՝ դողան «խաղաղութեան» համար. մենք ատում ենք այդ խաղաղութիւնը և պիտի վերջ տանք նրան, ստեղծելով մի ուրիշ խաղաղութիւն, երբ հայ ժողովուրդը կարող է իր հայրենիքում պատուով ապրել, աշխատել և առաջագիմել:

Հարւած հարւածի ետեւից, մէկը միւսից աւելի աւելի է մահացու, պիտի հասցնենք Թիւրք պետութիւնն անւանող դժոխային մեքենային, մինչև որ կը մաշի նրա կեանքի Թիւրք, մինչև որ անկարելի կը դառնայ նրա կացութիւնը և statu quo ն ճոռոցով ու տրաքոցով օդը կը ցնդի, տեղի տալով հասարակական և քաղաքական նոր կազմակերպութեան:

ՀԱՅՈՑ ՄԻ ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ

(ՄԻ ԵՆՐՈՊԱՑՈՒ ՊԱՏՄԱԾ)

Օգոստոս 7-ին (ըստ եւր.) հայերը մի վճռական յաղթութիւն տարին իրենց ամենաչար հակառակորդի՝ օսմանեան կայսերական զօրքի հրամանատար և քիւրդ իշխան Շարաֆի դէմ: Սա ապրում էր ոչ հեռու պարսկական սահմանագիծից՝ Աղզակ գաւառում և պետն էր մարզիկցիների — Անայ նահանգի այդ կողմերի քիւրդերից ամենավայրենի ցեղի: Շարաֆը և իր ցեղը, որոնք բնաջինջ եղած են հիմա, միայն անցեալ ամառ կոտորել էին մի հովտում Անից Պարսկաստան փախչող 1,800 հայ: Այս քաջագործութեան իբր վարձ սուլթանը նւիրեց նրան մի Թանկագին սուր, որ հիմա հայերի ձեռքումն է գտնուում: Ես ինքս այդ տեսայ:

Անում քաջաբար պաշտպանող այդ 800 հայերին քաղաքի անդլիական հիւպատոսը և ուսական գործակալը՝ խորհուրդ էին տւել ինքնակամ քաղաքը Թողնել որից յետոյ կոտորածը իսկոյն պիտի դադարէր. նրանք ազատ պիտի կարողանային անցնել դէպի Պարսկաստան, և բաւական անմիտ գտնեցան, որ այդ խորհրդրդին հետևեցին: Մահու չափ յոգնած այդ մարդիկ, որ եօթն օր անընդհատ դիմադրել և այժմ մնացել էին առանց ուտեստի և պաշտպանութեան բաւական միջոցների — յոգնութիւնից և քնից ընկձած՝ մէկ մէկ

մորթւեցան քիւրդերի ձեռքով: Հայոց մէջ բարենորոգչական երեք կուսակցութիւն կայ. յեղափոխական դրանց չէի կարող անւանել — դրա մասին խնդիր չի կարող լինել — որովհետև այդ երեք կուսակցութիւնները ոչ Թէ պահանջում են մի անկախ հայ Թագաւորութիւն կամ դրա նման մի բան, այլ միայն Բերլինի դաշնագրութեան խոստացածի իրագործումը: Կ Պոսի ֆրանսական դեսպանը իրաւամբ էր գրել իր կառավարութեան, Թէ Թիւրքերը բարենորոգչականներին յեղափոխական անունով էին դրոշմել մինչդեռ այդպէս չէ: Այդ երեք կուսակցութիւնները կոչւում են Հնչակեան, Արմենական և Դաշնակցական. այս երրորդը ամենից զօրեղն է: Այդ ջարդից իվեր այդ երեք կուսակցութիւնները երբեմն երբեմն փոքր ջոկատներ էին ուղարկում Ան իրենց ազգակիցներին պաշտպանելու համար: Բնական է որ դրանով ոչ մի կարևոր հետևանքի չէին հասնում: Այդ պատճառով անցեալ ձմեռ վճռեցին մի մեծ գործի ձեռնարկել, որպէսզի հայկական խնդիրը դարձեալ մոռացութեան չտրուի Եւրոպայում. ուզում էին նաև քիւրդերին պատժել և սարսափ տալով՝ անդրագոյն ջարդերի առաջն առնել: Սկսան գինեւել կազմակերպել և ռազմամթերք ձարել: Սկզբնական յատակագիծն էր յուսնիսին արշաւել, որովհետև քիւրդերն այդ միջոցին դեռ հովիտներումն են և ոչ սարերում, հետևաբար աւելի դիւրաւ մատչելի են. և ուզում էին իսկոյն արշաւել քիւրդերի մէջ ամէնից վայրենի Մարզիկ կոչւած ցեղի և նրա պետի Շարաֆի վրայ: Բայց այլևայլ բաներ եկան խանգարեցին, այնպէս որ ստիպւեցան սպասելու կացութիւնը վատթարացաւ դրանով: Պէտք էր նաև երեք Թշնամու դէմ պատրաստ լինել՝ պարսկական հողի քիւրդերի, օսմանեան քիւրդերի և օսմանեան պետական զօրքի դէմ: Սակայն բոլոր այդ խորհրդածութիւնները մէկ կողմ Թողին և գործի ձեռք զարկին: Զէին ուզում կուր բռնել պարսկական քիւրդերի հետ, պարսիկ կառավարութիւնը չԹշնամացնելու համար, ուստի ծայրայեղ զգուշութիւն էր հարկաւոր արշաւանքի ժամանակ. դրա համար էլ գիշերն ընտրեցին. երկու գիշերում յաջողութեամբ, բոլորովին գաղտնի պարսկական քիւրդերի գծով անցան օսմանեան հողը, առանց մէկից նշմարելու: Ցերեկը պահուում էին սարերում:

Արշաւախումբը կազմած էր 300 հոգուց. դրանց մէջ 25 ձիաւոր: Արշաւանքը կատարւում էր այն կարգով ու կանոնով ինչպէս պրուսական զօրքի մէջ. ես անձամբ տեսայ: Զօրքը մեծ մասով բաղկացած էր բազում դժբերակ փորձերից անցած հասակաւոր մարդկանցից: Մուսլ լուրջ դէմքեր, պողպատե կազմաձեւեր: Ես աւելի շատ վատ էի երևակայում այդ տարրերը: Ցիրօրի ազատութեան դիւցազներին էին յիշեցնում այդ մարդիկ իրենց լայնալանջ, ջղուտ և կարճ ու լիքը կազմաձեւով: Շատերը նրանցից կոտորածների ժամանակ կորցրել էին կին, որդիք, եղբայրներ և ծնողք: Իսկոյն նկատուում էր, որ խնդիրը մի երեխայական, Թեթևամիտ խաղի մասին չէր, այլ լուրջ գործի: Արշաւանքը չսկսած աստաճային պաշտօններ կատարւեցան ուղղների համար և վնուտներին բացատրւեցան իրենց անելիքը: Ազգի համար, եկեղեցու համար, արդար գործի համար էին դնում նըրանք կուր դաշտը: Մասնաւորապէս յուզեց էր գիշերը մի մեծ պարտէզում բանակի համար կատարած ժամերգութիւնը: Բանակի խորանի վրայ դրած էին Ս. Գիր-

քը, խաչ Տրացան, դաշոյն, մի մեծ և շատ՝ փոքր դրոշակներ: Այդ ժամերդուծիւնը այսպէս էր կազմած՝ քարոզ, հոգեհանգիստ անցեալ տարւայ 800 մորթւածների համար և զինուորների երդումը: Ամէն մի զինուոր յօտենում էր սեղանին և բարձրացնում միջամտուն ու ցուցամատը: Երգմնագիրն էր. «Յանուն Աստուծոյ և Հայրենիքի, ուխտում ենք և խոստանում, որ մենք, Հայ կաթողիկոսներս, գնում ենք զոհելու մեր կեանքը մեր ժողովրդի արգար գործի համար: որ մենք չենք լքանի և դաւաճանի մեր Հայրենիքին, մեր զէնքին, մեր դատին. որ կը հնազանդենք բոլոր հրամաններին և խիստ կարգապահութիւն կը պահենք:»

Երրորդ օրը առաւօտեան արդէն կարելի էր հեռագրի տակով տեսնել թշնամու բանակը: Երկախալքը լռութեանը յետոյ զինուորները հաւաքեցան հայկական մի հին սրբատեղում: Երեկոյ էր, արևի մայր մտնելուց քիչ առաջ: Ամէնքն էլ չորեքցին և կարդացին apostolikum:

Երկու քահանայ կար զօրագունդի մէջ: Մէկը գտնուում էր դեռ լրտեսող ջոկատում, միւսը՝ զինւած, խաչը աչ ձեռքին, քահանայական բեղոյրը գլխին — քահանայական միւս զգեստները չունէր — հաղորդում էր զօրագնդին: Աւելի լաւ հասկանալու համար պէտք է դիտել, որ Հայ եկեղեցին գինին ու հացը առանձին չի բաշխում, ինչպէս՝ անում են մեզ մօտ: Հացը դնում են գինու մէջ և ասիւ գինու մէջ թրջած հացը բաշխում: Այդ հացի մնացորդը պահում են հիւանդներ հաղորդելու համար: Այն հոգեւարքներին միայն — որոնք չեն կարող մասը կուլ տալ — թոյլ է տրուում փոխանակ հացով հաղորդելու, ջրի մէջ դնել մասը և այդ ջրից խմացնել: Նոյնն արաւ այստեղ և քահանան, որովհետեւ, ասաց ինձ, սրանք էլ են մեռնողներ: Ամէնքն էլ խմեցին՝ ոգևորութեամբ, հաւատարիմ՝ իրենց քրիստոնէական կրօնքին՝ իրենց հայրենիքի համար մեռնելու: Նախ հետեակ զօրքը խմեց, ապա հեծելագունդը: Ետեւորը կային նրանց մէջ՝ որ շատ տարիներից իվեր չէին հաղորդուել: Հէնց նրանք էին աւելի մեծ ջերմեանդութիւն ցոյց տալիս: Հաղորդող քահանան իսկապէս հայ ծէսի համաձայն, պէտք է առաջ ծունկ չորքեր և մի ուրիշ քահանայի առջև խոստովանւէր ու թողութիւն ըստանար: Բայց որովհետեւ միւս քահանան այնտեղ չէր, վերջում ծունկ չորքեց նա, մեղայականը կարդաց հաւաքած զօրքի առջև, թողութիւն ստացաւ նրանից և ինքն էլ հաղորդութիւն առաւ: Դրանից յետոյ հեծաւ իր ձին և Դաշնակցական Խաչը բացաւ, որ ամէնքն էլ տեսնեն. և բոլորի գէմքը փայլեցաւ: Այդ Խաչի ծայրը մի նիզակ էր ներկայացնում, մէկ թւեր՝ մուրճի ձևն ունէր, միւսը՝ բահի: Աջ ու ձախ կողմերից երկու ճառագայթներ կային, մէկը դաշոյնի և միւսը հրացանի ձևով: Խաչի մէջտեղում մի վահան կար, վրան գրւած՝ «Բերլինի դաշնագրութիւն, 61^{րդ} յօդուած»: Խաչը փայտի էր, վահանը՝ պղնձի, մնացած նշաններն էլ նոյնպէս մետաղից քանդակագործւած: Յուզիչ մի տեսարան էր այդ զինւած քահանայի բարձրացած աջում լուսաշող վառուում էր խաչը՝ մայր մտնող արևի ճառագայթների տակ:

Ապա քահանան սկսաւ խօսել ձիու վրայից. «Մինչև հիմա ձեզ հայրուկ, աւազակ էին կոչում, իսկ ես անւանում եմ ձեզ Հայ բանակի անդրանիկը: Ձեր կատարած ուխտը, ձեր տւած երդումը և բոլոր միւս բաները — առաջին անգամն է որ պատահում է մեր ժողո-

վերդի պատմութեան մէջ: Թէ ինչ ենք ուզում մենք, ուրիշ առիթներով բացատրած է եղել ձեզ. աւելորդ է մէկ էլ կրկնել: Ձեր ուշագրութիւնը հրաւիրում եմ այն բանի վրայ, որ այսօր առաջին անգամն է որ բացուում ձեր աչքի առջև Դաշնակցական Խաչը: Նայեցէք արևմուտք. դուք տեսնում էք այնտեղ աւերակ սրբութիւններ և եկեղեցիներ, դուք տեսնում էք բռնի խլամաւորացած ձեր եղբայրներին: Նրանք էլ տեսնում են ձեզ ու լսում զէնքերի շաչիւնը: Քանզաւած քաղաքներն էլ ամութալից կերպով պղծւած կոյսերն էլ ամայացած Հայրենիքն էլ նայում են ձեզ, ողջունում են ձեզ լի յոյսերով, և նոր ետանդով ապագայի համար: Դուք կանգնած էք այնտեղ, ուր ձեր նահատակների սկոյրներն են թաղւած՝ անցեալ ժամանակայ հերոսների: Այսօրւայ ընկճւած ձեր եղբայրները և ապագայ սերունդները սպասում են ձեզ նից, որ դուք նրանց յոյսը պահէք: Անմեղ, անօգ գառը զարհուրելի Վիշապի ճանկերից փրկելը — քրիստոնէայ, հզօր Եւրօպայի սրբազան պարտականութիւնն էր: Նա յայտարարեց և խոստացաւ մեզ փրկել բայց երեսի վրայ ձգեց մեզ և Վիշապին բաց թողեց մեզ վրայ, որ մեզ ոտնակոխ անի: Հայրենիքի տխուր կացութիւնը և մի սուրբ պարտականութիւն կանչել է ձեզ, և թշնամու դուռը բերել: Դուք քիչ էք հզօր ուժի դէմ, հոգ չէ: Ձեր սակաւութիւնը թշնամուն սարսափելի կը լինի, որովհետեւ դուք սուրբ գաղափարով էք զինւած: Ձեզ հետ է Աստուած և ձեր վրայ յոյս ունեն բոլոր երկիրների ազատամիտ մարդիկ: Դուք 300 հոգի էք: Յիշեցէք որ Հռոմը շատ տկար էր Պերսէոս թագաւորի դէմ. բայց 300 հոգի Մակիդոն Սկևռլայի հետ Հռոմն ազատեցին: Դաւիթ արքան էլ 300 մարդ ունէր իր մօտ, — բայց ինչ արդիւնքների հասաւ իր հայրենիքի նկատմամբ: 300 հոգի ունէր նաև Ղարաբաղի մեր Դաւիթ բէկը, որ 70,000 պարսիկ ու թիւրք յաղթեց: Դուք էլ միայն 300 հոգի էք և դուք էլ կը յաղթէք: Աստուած է, որ դուք կը յաղթէք Աստուծոյ օգնութիւնով և ձեր քաջութեան շնորհիւ: Ահա փայլում է Դաշնակցական Խաչը մայր մտնող արևի ճառագայթների տակ, ծածանւում են դրօշները, զէնքերը շողշողում. և ձեր հոգիները բոցավառ են՝ ո՛վ քրիստոնէութեան և հայրենիքի դիւցազներ:»

Դրանից յետոյ բոլորը միասին սկսան երգել այն սաղմոսը, որ հայոց թագաւորը՝ Վարդան Մամիկոնեան և իր երէցը՝ Ղևոնդ, Ե. գարում սովոր էին երգել պարսիկների դէմ մղած իրենց կռիւների ժամանակ:

Դատես, Տէր, զայնոսիկ, ոյք դատեն զիս. Մարտիր ընդ այնոսիկ, ոյք մարտնչին ընդ իս. Առ զզէն եւ զասպար քո եւ սրի օգնել իմօ. չան գտուր քո ընդդէմ հալածչաց իմոց, արգել զնոսա, Եւ ասա դու ցամծն իմ թէ իրկութիւն քո ես եմ:

Արևը մայր էր մտել: Քահանան դրօշը և խօսքը ձեռին խմբի առաջն անցաւ և բանակը ճանապարհ ընկաւ. հետեակ զօրքը առջևից, հեծելագունդը յետևից: Ետևով հասան մի սարի գագաթ, ուրտեղից կարելի էր թշնամու գիրքերին հասնել: Քիւրդերի սև վրանները նրանց առաջն էին: Միայն երկու սպիտակ վրան էին երևում: Ետևից էր և իր մերձաւորներին: Թշնամին շատ բազմաթիւ էր և լաւ դիրք ունէր: Եր առաջն ունէր մի գետ. — որի ափին էին զարկած վրանները — և յետևից՝ սարեր: Զօրքը — չպաշարուելու համար — լայն տարածութեան վրայ էր գնում: Տասը մարդ ջոկեցան եր-

էն բլուրները բռնելու, ուրիշ տասը՝ դիրք բռնեցին աւելին ցանք՝ թշնամու բանակին մօտիկ. իսկ բանակը առաջ խաղաց դէպի մի նեղ հովիտ, ուր սպասեցին. դեռ վաղ էր, իսկ յարձակումը առաւօտեան դէմ պիտի սկսէր: Վամացուկ, ամենայն զգուշութիւնով և խորին լուսութեան մէջ յառաջ էին սողում, մինչև ամէնքն էլ դրօշը և խաչն հետ բանակատեղի մօտն հասան: Խստիւ արգելած էր ամէն անտեղի շարժում, և ամէն քան կատարեց յաջողութեամբ, զօրքի ընտիր կարգաւզահաւթեան և ճարպիկութեան շնորհիւ: Լուսացաւ վերջապէս, թշնամին զարթնեց և ճանաչեց հայերին: «Ֆէդայի», աղաղակեցին քիւրդերը և սկսան կուռ պատրասուել: Ֆէդայի նշանակում է անձնազոհ. քիւրդերն այդպէս են անւանում հայ յեղափոխականներին: Քիւրդերը հաւարի կանչեցին: Հայ զօրավարն հրամայեց միախուռն արձակել հրացանները, սկսաւ կռիւը, մի յամառ կռիւ: Բայց հէնք քիւրդերի դիմադրութիւնն էր որ ոգևորում էր հայերին, այնպէս որ նրանք բարձրաձայն «հուռույթով» վրայ թափուեցան վրաններին: Քահանան փաթաթեց իր խաչը, կապեց իր քամակին և ինքն էլ սկսաւ կռուել: Մօտ երկու ժամայ կուռ յետոյ՝ հայոց յաղթութիւնը վճռւած էր: Աղոյստել արգելած էր: Երեխայ կամ կին անպատուողին մահան պատիժ էր սպանուում: Միախուռն արձակւած ժամանակ միայն՝ մի քանի կին և երեխայ վիրաւորեցան կամ սպանուեցան: Մնացածները աղատ էին հեռանալու: Վրանները կրակի տրեցան: Բազմաթիւ ձի, ոչխար և տաւար կոտորուեցան, որովհետև կենդանիները դեռ արօտատեղի չէին ուղարկւած, այլ վրանների մօտ էին: Թող էր տրուում հրացաններն ու դաշոյնները հետները վերցնել: Բնականքար կռիւն աւելի սաստիկ էր Շարաֆի երկու ըսպիտակ վրանների շուրջը, ուր, ինչպէս յետոյ իմացուեցաւ, այցելութեան էին եկած մի տաճիկ հազարապետ և բաւական շատ ուրիշ սպաներ: Երբ այդ վրանները մըտան, Շարաֆին տեսան շապկանց՝ փամփուշտոնոց բաց կրճքին վրայ՝ սպանւած իր նստած տեղում: Թիւրք հազարապետը նմանապէս մեռած էր. գնդակը ճակատին էր դիպել: Երկու հայեր, որոնք Շարաֆին մօտիկուց էին ճանաչում, հաստատեցին նրա մահը: Հայոց ձեռքն ընկաւ նրա սուրը, պաշտօնական դիւարիկը, ուսգօտին, այն հրօշարտակը, որով սուլթանը նրան հրամանատար էր կարգել և նրա շքանշանները՝ օսմանիէ և մէծիտիէ, Վուում չորս հայ միայն ընկան, այն ինչ քիւրդերի կողմից հարկւններ: Քիչ մարդիկ միայն ազատուեցին, այն էլ հեռաւոր վրաններից: Այդ ժամանակ մօտենում էին անթիւ քիւրդ հրոսներ, ինչպէս նաև օսմանեան կանոնաւոր զօրքի մի ջոկատ, այնպէս որ հայերը ստիպւած էին նորից դիրք բռնել: Արդէն լոյս էր և տեսնում էր քիւրդերի ամէն կողմից շտապով գալը: Հեծեղախումբը մեծ քաջութիւնով պաշտպանում էր ու ծածկում նահանջը: Ընկան ուրիշ չորս հայ և եօթը վիրաւորեցին, բայց այնպէս որ դեռ կարող էին քայլել: Օրւայ մէջ միւս ծանր վիրաւորւածներին օգնեցին ձիանների վրայ նստել և այդպիսով կարողացան հետները տանել: Հազարաւոր քիւրդեր շրջապատւած էին պահում հայերին, շատ էին արձակում, բայց քիչ էին դպնում, այն ինչ հայերը էին շատերին սպանեցին և վիրաւորեցին: Այն տասն հայերը, որոնք շատ մօտ էին բանակատեղին, էլ չկարողացան նահանջել: Պաշարուեցան և ծանր կացութեան

մէջ էին. երեքն ընկան, մնացած եօթը գիշերանց կրուելով ճանապարհ բացին, անցան: Մնացած հայերը, որոնք լաւ ուղեցոյցներ ունէին, նոյնպէս գիշերով անցան քիւրդերի բազմութեան միջով, որովհետև պաշարի պակասութիւնից չէին կարող երկար մնալ իրենց դիրքերում: Նրանք ցրուեցան լեռնային: Այսպէս էր ահա հայոց յաղթութիւնը Աղբակում: Վարելի է վիճել թէ այդ գործըն և իր հետևանքները հայկական դատին օգտակար կը լինեն թէ չէ, մանաւանդ Եւրոպայի աչքում: Բայց մարդ հարկադրւած է ընդունելու — մի բան որ սիրում են դիմաւորուելու — թէ քաջ հայեր ևս կան: Այն նահանգի օսմ. հիւպատոսը, — ուր յաղթութիւնը տարւած էր, — մի խորամանկ աղէս, լուր է տարածել — թէ և ինքը չէ եղել գործի տեղում — որ իբր թէ հայերը սարսփելի անգթութիւնով վարւած են կանանց և երեխաների հետ: Շատ հաւանական է որ իր քիւրդերը յետոյ, դիակների վրայ ամէն տեսակ խժոժութիւններ գործած լինեն, հայերին վերագրելու համար: Այդ պատճառով ես այստեղ բացորոշ կերպով յայտարարում եմ, թէ այդ պնդումները սուտ են:

Ղալասար. ՀԱՆՍ ՖԻՇԷՐ

**

Այս յօդուածը հրատարակւած է գերմանական շուքառֆ յայտնի շաբաթաթիւթերի 25 սեպտ. համարում: Հեղինակը Հանս Ֆիշեր-Նամբադանօթ գերմանացի ծանապարհորդն է, որ այդ մեղքին գտնուում էր պարսկա-թիւրքական սահմանագլխի մօտ: Ծ. 70.

Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Է Ն

13/25 օգոստոս 97.

Ամբողջ Վասպուրականը կը ծփայ ու կ'օրօրւի մահաւան արհաւիրքներու մէջ: Ծագնապի մէջ է և թիւրք կառավարութիւնը, տազնապի մէջ է և հայ ժողովուրդը: Մահամահալխի Մեծ-Արշաւանքը և Բերկրի ընդհարումները ցնցեցին կառավարութիւնը: Փոքր-Ասիոյ խորերէն դէպի Վասպուրական առաջ կը շարժին օսմանեան քոսոտ զինուորները: Մէկ րոպէէն միւսը նոր նոր փոփոխութիւններ կը կատարուին. մէկը պաշտօնանկ կ'ըլլայ, միւսը տեղը կ'անցնի, բայց և այնպէս կառավարութիւնը չի կրնար հանգարտիլ ու միամտիլ:

Դաշնակցական քաջարի, անձնէր Ֆէդայիները երկրի խորը մտած են արդէն և իր քթին տակ խլրտումներ առաջ կը բերեն: Ատ շատ աղէկ գիտէ գլուխը կորսնցուցած թիւրք կառավարութիւնը, ու չի համարձակիր ո՛ր և է խիստ միջոց գործ դնել զանոնք իր ձեռքն անցնելու համար: Աչքը պարսկական սահմանին յառած՝ սարսափահար կը սպասէ նոր փոթորիկներու և անդուր գիշեր ու ցերեկ, պատերազմի պատրաստութիւններ կը տեսնէ:

Մարդկցիներու աշերաթը չկայ այլևս, բնա ջինջ եղաւ իսպառ գազաններու այդ վոհմակը, որուն արիւնը կը պահանջէին հարիւրաւոր անմեղ զոհերու ուրականներն իրենց գերեզմաններէն: Շարաֆ պէյը շատ անգամ հրակէր կարգաց հայ յեղափոխականներուն օն առաջ արշաւելու, որպէսզի ինքը կարողանար իր ցեղին անպէտք հրացանները փոխանակել հայերու հրացաններով, որոնք շնորհքի մասին վաղուց լսած էր:

Շարաֆը անցած տարւան անուշ երազներով կ'ապրէր, բայց իրականութիւնը շուտով եկաւ փարատելու այդ ցնորքները. Ֆէդայիի գնդակը տեսած չէր դեռ:

Կոտորածի թւին մէջ չէ որ կը փնտռենք գործին մեծութիւնը: Գործը ինքնին մեծ է, իր տեսակին մէջ առաջինը և անոր համեմատ ալ ակնկալածէն աւելի մեծ նշանակութիւն ունեցաւ:

Թիւրք կառավարութիւնը նախապէս ծանօթ ըլլալով հանդերձ արշաւանքին, չէր ուզեր կարևորութիւն անգամ տալ և քիւրդերուն թողած էր որ իրենք մաքրեն պէտք եղած հաշիւը արշաւողներուն հետ: Բայց գործը կատարուեցաւ թէ չէ՝ կառավարութիւնը այնպէս սոսկալի կերպով իրար անցաւ, որ մինչև հիմա իսկ չի գիտեր ինչ ընելը. և իրարու ետեւէ նոր ձևի հրացաններ, թնդանօթներ, հետեակ և հեծեալ հազարաւոր զինուորներ սահմանադուրէր կը լեցընէ:

Քաղաքը Այգեքստանով միասին շղթայի մէջ առնւած է: Գիշերը մինչև լոյս կը պտըտին ձիաւոր և հետեակ պահստողներ, որպէս թէ արգիլելու համար որ մարդներս չմտնէ: Յիմար կառավարութիւնը չհամոզուեցաւ տակաւին որ ինքը անկարող է յեղափոխականի ճամբան կտրելու:

Իսկ մէկ ամիս առաջւան դողահար հայ ժողովուրդը այժմ, գլուխը բարձր բռնած, հպարտ հպարտ կ'ուզէ ցոյց տալ ամբողջ աշխարհին իր անձնէր զաւակներու հըրաշալի քաջագործութիւնները, և սրտի խորերէն դուրս կուտայ իր անսահման ուրախութեան և ոգևորութեան զգացումները: Ամէն ժամ, ամէն րոպէ, ան ալ թիւրք կառավարութեան նման կը սպասէ արշաւանքի ձայներ լսելու սահմանագիծէն, բայց պայմանով որ յեղափոխականները քաղաքին չմտնան և իրենց անհանգստութեան պատճառ չդառնան: Թող հրաշքներ կատարէ հեռուն, և յաջողութեան մէջ ժողովուրդը հրճւի միայն: Ախ, ե՞րբ պիտի վերնան մեր մէջէն այս յիմար համոզումները, այս մեռելային անտարբերութիւնը, այս նպաստակի վախկոտութիւնը. երբ ամէն հայ Ֆէդայի պիտի դառնայ:

— 0 —

3/15 սեպտեմբեր.

Տիրող հանդարտութիւնը առերևոյթ է: Կառավարութիւնը մեր ետեւէն ինկած է, մենք անոր ետեւէն. իրար կը խաղցընենք: Չորս օր առաջ, օր ցերեկով, բազմութիւն զինուորներ անակնկալ կերպով պաշարեցին Այգեքստանի մէջ 10-15 տուն, խուզարկեցին, բայց բան մը չգտան: Ետքը քաղաքամէջն ալ խուզարկութիւններ կատարեցին, բայց ուզածնին չկրցան ձեռք բերել:

Մեր X-ի խումբը որ պատրաստուած էր դուրս գալու, խուզարկութեան երկրորդ իրիկուն քաղաքէն դուրս ելաւ և առաջին դիշերն իսկ ընդհարում ունեցաւ պատահական քիւրդերու հետ, որոնցմէ մէկը գլորելով՝ անփնաս անցաւ դէպի X: Լուրը քաղաք հասնելուն պէս 50 հեծեալ զինուոր ճամբայ ելան, մինչև կուր տեղը գացին և փոխանակ մեր կտրիճներու հետքը որոնելու, ամենայն քաջութիւնով ձերբակալեցին խեղճ Բերգակ գիւղացիներ և քաղաք բերին: Ու խնդիրը գոցուեցաւ:

Ն Ա Ս Ա Կ Ս Ղ Ե Ր Դ Է Ն

9/21 մայիս 97.

Երբ կը գրեմ այս տողերը, արհաւիրքը արդէն պատած է Սղէրդը, և չեմ գիտեր թէ այս նամակս ապահով ձեռքերու պիտի կարենամ յանձնել: Նամակս կիսատ մնայ թերևս և ես ալ խօհրժութիւններու զոհ երթամ:

Հայը իր տանը փակւած, նստած ցուրտ գետնին վրայ, կը խորհի ու կը խորհի թէ ի՞նչ պիտի ըլլայ իր վիճակը, ո՞ր պիտի յանգի անգործութեան վերջը:

Սովը տարածած է արդէն իր ահաբեկութեան քաղաքիս վրան. թիւրքին սուրէն ճողպարածը սովի՞ն բաժին պիտի ըլլայ . . .

Այդ օրհասական վայրկեաններու մէջ իբր փրկութեան հրեշտակներ երեցան երկու բողոքական միսիօնարներ, որոնք 10 օր առաջ Մերտինէն հոս եկան նպաստ բաշխելու, անխտիր հայ ու բողոքական կարօտեալներու:

Տասը օրւան մէջ արդէն բաւական դրամ բաշխած, բաւական արցունք սրբած, բաւական ընտանիքներ մահւան ձիրաններէն ազատած էին . . .

Բայց այդ բանը չէր կրնար գաղտնի մնալ երկար. թիւրք անօթի խուժանը արդէն իմացեր էր նպաստներուն բաշխիլը ու ակռները կը կրճտէր . . .

Այս առտու կանուխ՝ թիւրք ժանտարմ մը, Խալիլ Գրտրէթէ անուն, կ'երթայ Խան-էլ-փաշա պանդոկը, ուր իջեանած էին երկու միսիօնարները. ոտքի հարւածով մը անոնց սենեակին դուռը կը կոտրէ և ռեփովէրը ձեռքին ներս կը խոյանայ: Միսիօնարները՝ յանկարծակիի կուգան: Խալիլ գնդակի հարւածով մը անոնցմէ մէկը գետին կը փռէ անկենդան, ապա միւսին վրայ կը յարձակի: Բայց սա կը դիմադրէ ու բարձին տակէն ռեփովէր մը հանելով Խալիլին վրայ կ'արձակէ ճիշդ այն միջոցին, երբ Խալիլն ալ իր դանակը անոր սիրտը մխած էր . . .

Կառավարութիւնը շուտով կ'իմանայ պատահածը. խանը պաշարել ու դիակները դուրս հանել կուտայ. բայց չի մոռնար գրաւելու միսիօնարներուն սենեակը գտնուած 60 ռսկիի գումարը, որ աղքատներուն յատկացւած էր:

Առտուան նոյն ժամուսն ուրիշ դէպք մը տեղի կ'ունենար հայոց եկեղեցիին առջև:

Թիւրք խուժանը խոնւած էր հոն, և երեք արիւնարբուններու՝ Ապտալլահ Մէսլէհի, Հաճի Եսսին Չուրտէ ու Պէննէ (որմնագիր) Հաճի Ապտալլահի դրդումով, որոշած էր զարնել հանդիպող հայերը ու կողոպտել ինչպէս ըսինք, կը կարծէին թէ հայերը կրկին հարուստացած են նպաստները բաշխելէն ետք:

Այդ պահուն քաղաքին հայ քահանաներէն՝ Տ. Յովհաննէս ծանօթ վաթսուսամեայ ծերունին, — որ Բասէլ-բուլայէս (գեղեցիկ քահանայ) կը կոչէր իբ փառահեղ՝ ալևոր ժողովին և փափուկ սպիտակ մորթին համար, — իր տունէն դուրս կ'ելլայ եկեղեցի երթալու: Եկեղեցին դուռը հասած չհասած՝ խուժանը վրան կը յարձակի և տեղն ու տեղը կը մորթէ ծերունին:

Իրարանցում մըն է կըսուի. ժանտարմները վրայ կը հասնին և կըստիպեն ամբոխը ցրելու: Խուժանը կը

կատղի և իր զայրոյթը կ'ուզէ թափել թրքացած հայ ժանտարմներու վրայ, բայց սխալմամբ թիւրք ժանտարմ մը կը սպաննէ: Այդ միջոցին — ուշ, ինչպէս միշտ — ընդհարումի վայրը կը հասնի հրամանատար փաշան գուժարտակ մը հետեակ զօրքով:

— Ի՞նչ կ'ուզէք, կը հարցնէ փաշան պարագլուխներուն:

— «Կեալուրները պիտի ջարդենք», կը պատասխանեն:

— «Լաւ. անոնք, որ ջարդել կ'ուզեն, իրենց ստորագրութիւնով աղերսագիր մը թող տան ինձ, որ սուլթանին խրկեմ: Կառավարութենէն հրաման չունիմ, որ հայ ջարդուի»: (Ըսել է որ կոտորածին ատեն կառավարութիւնն էր հրաման տուողը):

Փաշան իսկոյն կը հրամայէ երէք պարագլուխները իրենց զաւակներով մէկտեղ ձերբակալել ու բանտարկել և ամբոխն ալ ցրել:

Դէպքը, որ մեծ աղէտներու դուռ կրնար բանալ, վերջացաւ այսպէսով: Բայց ատ վերջանալ չի նշանակեր, այլ յետաձգել, կրակը մոխիրով ծածկել փոքր հով մը . . . և ահա մոխիրը կը ցնդի և նոյն կրակը երևան կ'ելլայ աւելի բորբոքած քան երբեք . . .

Եւ դեռ ինչքոր տեղի կ'ունենան արգեօք Հայաստանի միւս անկիւններուն մէջ:

Իսկ դո՛ւք, ազատ երկրի մէջ ապրող հայեր, ի՞նչ կ'ընէք արդեօք: Մի՛թէ այսչափ խեղճութիւն, անարգանք, բան մը չեն խօսիր ձեր սրտերուն: Ե՛րբ պիտի սթափուիք արդեօք. դեռ չհասկցա՞ք, թէ ի՞նչ է մեզ հարկաւոր: Նպաստի դրամն ալ փորձանք եղաւ ժողովուրդի գլխուն, խուժանին ագահութիւնը ալ աւելի սրելով: Ինքնապաշտպանութեան միջոցներ չունինք. ԶԷՆԲ հարկաւոր է մեզ, ԶԷՆԲ. գթացէ՛ք, զէնք հասցուցէ՛ք թշուառ ժողովուրդին, քանի դեռ ուշ չէ . . .

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ռ Ի Թ Ի Ի Ն

ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ մէջ ստացւած է.

Քոլիթըրի քղ-ի Անձուէր խումբէն 32 1/2 շէրին, Ռուչչուրէն՝ Հնգամայ Արթին Սահակեան 5 Ֆրանկ: Սօֆիայէն՝ Մ. Ա.-ի ձեռամբ Խորհողը 5 Ֆր.:

ՎՐԷԺ Կեդր. Կոմիտէն ստացած է.

1897 ապրիլ՝ Թուրանի «Չղջիկներ»-ի խ. 750 ղը-ուան, «Գարուն» խ. 1250 ղը.: Յունիսին՝ «Աշտաֆի» խ. 4500 ղը., «Փունջ» խ. 500 ղը.: Համագումար 7000 ղըան:

ՎԻՃԱԳ քաղաքի Կեդր. Կոմիտէն ստացած է.

Երէք բարեկամներ 60 դահեկան, Ս. Եղիա 8 դհ., Մատթէոս 10 դհ.:

ՏԱԳԱՐ քղ-ի Կեդր. Կոմիտէն ստացած է

Օգոստոսի ամսալճարը. Սուլիչ շըջ. 55 դահեկան, Սուր 10 դհ., Զրվէժ շըջ. 27 դհ., Գեղջուկ շըջ. 20 դհ., Կը-ուուի շըջ. 25 դհ., Մամիկոնեան շըջ. 25 դհ., Էանթ շըջ. 20 դհ., Սլաք շըջ. 20 դհ., Վրէժ Կոմիտէ 70 դհ.:

ԱՂԵՍԱՆԳՐԻՈՅ Կոմիտէն ստացած է.

Բարկէն Սիւնիի իւղաներկ պատկեր մը (նւիրեց Արամ)՝ վիճակահանութեան դրւած, հասոյթ 585 դահեկան: Տատուր 5 դհ., և 5 դհ., և 5 դհ., Յ. Ղազ. 8 դհ., և 8 դհ., և 8 դհ.: Արմ. Վարդ 10 դհ.:

և 10 դհ., և 10 դհ., Յ. Մուշ. 10 դհ., և 10 դհ., և 10 դհ., Մըկը. 10 դհ., և 10 դհ., և 10 դհ., Գ. Է. 5 դհ., և 5 դհ., Հայ. Երիտ. Գանձանակէն 27 դհ., և 63 դհ., և 46 դհ., և 17 դհ. 20 փարա, և 40 դհ., և 29 դհ., և 43 դհ. 20 փր. և 65 դհ., Գիւղէլ 10 դհ. և 10 դհ. և 10 դհ., Ա. Յ. Յար. 20 դհ., և 20 դհ., Ս. 2.-ից 5 դհ., Քաջ Մ.-ից 5 դհ. և 5 դհ., Յուլի 100 դհ., Յ. Աղիլ 20 դհ., Բուրգ Խոււմը 25 դհ. և 25 դհ., Տրոյեան 5 դհ., Խորենացի 10 դհ., Առիւծ 12 դհ., Հայ Գրիգորեան 20 դհ., Սարգիս 5 դհ., Ս. 2.-ից 5 դհ., Միութիւնը փրկութիւն է 20 դհ., Կօջան բէյ 30 դհ., Յիկ. Մայր Հայաստան 10 դհ., Յիկ. Շուշանիկ 10 դհ., Պօլսեցի 20 դհ., Սրտոն 10 դհ., Յոյս 10 դհ., Գեալուր Օղլու 20 դհ., Մեղու 30 դհ., Էր. Դերօ 10 դհ., Շ. Գ. 20 դհ., Մ. Աղիլ 5 դհ., Ոմն 10 դհ., Ա. Հ. 5 դհ., Իցաթիթամաս 5 դհ.:

ՈՍԿԷԱՆՅՈՒ Կոմիտէն ստացած է.

Կապար 10 օսմ. ոսկի, Շուշէճի 40 օսմ. ոս., Անկեղձ հայրենասէր 35 օսմ. ոս., Բարեսիրտ 10 օսմ. ոս., Ռուբինեան խ. 25 դահեկան, Անդրանիկ խ. 15 դհ., Ռոտուժ խ. 15 դհ., Ռոտորդաց խ. 30 դհ., Աստղ խ. 32 դհ., Մըկըրտ՝ համակրող անհատ 15 դհ., Լապտեր 5 դհ.:

ՆԱԽԱՅԱՆԳԻՍՏԻ Կոմիտէն ստացած է.

Կլորիկէն՝ Պաղղայեան 5 ուուրլի, Արթուն խ. 7 ու. Զրաշէնի «Անահիտ» Մասնաձիւղ 1 ու., Աղասի և Արուսեակ 1 ու., Աբապի եգիպտական 1 «սանդուխի» Երէք խաչեր 3 ու., Դիւրագրգիւ 15 ու., Միգդար 1 ու., Արծիւ 30 ու., Աւարայր քղ.-էն Գ.-ի ձեռքով՝ Սեդրակ 10 ու., Վաղարշ 10 ու., Երեմի 5 ու., Դաւիթ 10 ու., Երմօն 1 ու., Խեղճ 20 կոպէկ. Յարութիւն 3 ու., Սարգիս 10 ու., Ալեքսի 2 ու., Իսրայէլ 10 ու., Ծաղիկ 3 ու., Սիւմօն 10 ու., Աբգար 5 ուուրլի:

ՄԱԿԵՐՈՆ Կոմիտէն ստացած է.

Արևելեան խ.-էն 66 լև և 90 սանթիմ (Յունիսի և օգոստոսի ամսալճար):

№ 9-ի մէջ հրատարակւած ՀէվըՏիլի (Հս. Ամերիկա) հանգանակութեան ցուցակի շիլլինկները դուրս պէտք է կարգալ:

№ 11-ի-մէջ Տապարի Կուուի շըջ. 30 դհ., ուղղելի 40 դհ.:

Աթէնքի Combat յեղափոխական թերթին հայազգի պ. խմբագիրը կը խնդրէ մեզմէ յայտարարել թէ յոյն կառավարութիւնը արգիլած է թերթին հրատարակումը և 10 րդ թիւը գրաւած: Մտադիր է հրատարակութիւնը շարունակել ժընևի մէջ:

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցեով՝
 Rédaction du Droschak, Genève (Suisse)